ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 215-1-2050 « 03 » 06 2016 թ.

Ձեր

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարար
պարոն Էդվարդ Նալբանդյանին

Հարգելի պարոն նախարար

Ի կատարումն ՀՀ վարչապետի 26.05.2016թ. թիվ 01/06. 3/1727-16 հանձնարարականի հայտնում եմ, որ ՀՀ ոստիկանությունում ամփոփվել են ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարծիքները՝ 2014թ. օգոստոսի 15-ի «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի), ինքնագնաց մեքենայի և տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգի կազմակերպման մասին» համաձայնագիրը Ղազախստանի Հանրապետության կողմից վերապահումով վավերացնելու վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սահմանված ժամկետում կարծիք չի ստացվել:

ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունները և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն՝ վերոնշյալ համաձայնագիրը Ղազախստանի Հանրապետության կողմից վերապահումով վավերացնելու վերաբերյալ առարկություններ չունեն:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ ոստիկանությունն ընդունելի է համարում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ներկայացված առաջարկությունը՝ նշված համաձայնագիրը ՀՀ կողմից նույնաբովանդակ վերապահումով ստորագրելու վերաբերյալ (վերապահման նախագիծը կցվում է):

Այլ առաջարկություններ չկան:

Առդիր՝ «6» թերթ:

06 06 16

Հարգանքով,

Գեներալ-լեյտենանտ **Վլադիմիր Գասպարյան**

05404

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТР ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

MINISTER OF DEFENCE OF
THE REPUBLIC OF ARMENIA

«13» 06 2016 թ.

ԴՀ/510-1081

ՀՀ ոստիկանության պետ
գեներալ-լեյտենանտ **Վ.ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ**

Հարգելի Վլադիմիր Սերգեյի

Ի պատասխան Ձեր՝ 08.06.2016թ. թիվ 2/5-1-2079 գրության, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունում դիտարկվել է 2014թ. օգոստոսի 15-ի "Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի), ինքնագնաց մեքենայի և տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգի կազմակերպման մասին" համաձայնագրի վավերացման վերաբերյալ ձեր կողմից առաջարկված հետևյալ՝ "Սույն Համաձայնագրի ազդեցությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, այլ զորքերի տրանսպորտային միջոցների, ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների և հատուկ ծառայությունների տրանսպորտային միջոցների վրա" սահմանումով վերապահումը, որի առնչությամբ առարկություններ չկան:

Հարգանքով՝

Ս.ՕՀԱՆՅԱՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՏՍՈՒ
ՄՏԻՑ № 2955
14 06 2016 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՐՏՈՒՂԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 3891
14 06 2016 թ.

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12
г. Ереван, 0044, Багревандa 5, Тел.: (+374 10) 29-44-01, Факс: (+374 10) 29-43-12
Yerevan city, 0044, Bagrevand 5, Phone: (+374 10) 29-44-01, Fax: (+374 10) 29-43-12